

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/1075Ա

28/09/2011

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հաստատել «Դրամական միջոցների ներգրավման համաձայնագիր»-ի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավաբանական վարչությանը՝

2.1. սույն որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի «Դրամական միջոցների ներգրավման համաձայնագիր» օրինակելի ձևը հաստատելու մասին թիվ 1/1567Ա որոշմամբ հաստատված Համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր) սահմանված կարգով ծանուցել Համաձայնագիրը ստորագրած առևտրային բանկերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Համաձայնագիրը դադարեցնելու մտադրության վերաբերյալ.

2.2. սույն որոշման 2.1.-րդ կետով սահմանված բանկերին ծանուցումն ուղարկելուց հետո նախաձեռնել Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի հետ սույն որոշման 1-ին կետով հաստատված համաձայնագրի կնքումը:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման վարչությանը մինչև սույն որոշման 1-ին կետով հաստատված համաձայնագրի՝ գործող առևտրային բանկերի հետ կնքումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների ձեռնարկում կատարել համապատասխան լրամշակումներ:

4. Սույն որոշման 2.1.-րդ կետով սահմանված բանկերին ծանուցումն ուղարկելու պահից, եթե այդ ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի «Դրամական միջոցների ներգրավման համաձայնագրի» օրինակելի ձևը հաստատելու մասին թիվ 1/1567Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Զավադյան

Բովանդակություն

Հավելված 1
 Հոդված 1. Համաձայնագրի առարկան 2
 Հոդված 2. Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները 2
 Հոդված 3. Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը... 3
 Հոդված 4. Կողմերի պատասխանատվությունը 4
 Հոդված 5. Վեճերի լուծման կարգը 4
 Հոդված 6. Համաձայնագրի գործողության ժամկետը 5
 Հոդված 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր) 5
 Հոդված 8. Այլ դրույթներ 5
 Հոդված 9. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները... 6

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան

«__» «_____» 20__ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ _____, մի կողմից, և _____ բանկը (այսուհետ՝ Բանկ), գործելով համաձայն Բանկի կանոնադրության, ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝ _____ մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

Սույն համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով կանոնակարգվում են Կենտրոնական բանկի կողմից Բանկից դրամական միջոցների ներգրավման հետ կապված Կողմերի միջև ծագող հարաբերությունները՝ սահմանելով վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 2. Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները

- 2.1. Սույն համաձայնագրում կիրառվող բառակազմում մեծատառով գրված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝
- 2.1.1 Դրամական միջոցների ներգրավման գործարք (այսուհետև՝ Գործարք)՝ այն գործարքը(ները), որով Կենտրոնական բանկը Գործարքի կնքման օրը Բանկից ներգրավում է դրամական միջոցներ՝ Գործարքի մարման օրը դրանք վերադարձնելու և հաշվեգրված տոկոսագումարը վճարելու պարտավորությամբ.
- 2.1.2. Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Կենտրոնական բանկում դրամական միջոցներ ներդնելու առաջարկ (<Տ 100 կամ թղթային վճարման հանձնարարական).
- 2.1.3. Հայտի մերժում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտի սահմանված կարգով մերժում (<Տ 952).
- 2.1.4. Գործարքի կնքման ամսաթիվ՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկն ընդունում է Հայտը.
- 2.1.5. Գործարքի մարման ամսաթիվ՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը պետք է Բանկի թղթակցային հաշվին մուտքագրի Գործարքին համապատասխան ՀՀ դրամը: Գործարքի մարման ամսաթիվը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Գործարքի մարման օր է համարվում դրան հաջորդող Բանկային օրը.

- 2.1.6. Տոկոսադրույք՝ Գործարքի կնքման ամսաթվի դրությամբ Կենտրոնական բանկի կողմից գործող դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույք.
- 2.1.7. Միջանկյալ հաշիվ՝ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով Կենտրոնական բանկում բացված ընդհանուր միջանկյալ հաշիվ.
- 2.1.8. Բանկային օր՝ օրացուցային շաբաթվա այն օրը, երբ Կենտրոնական բանկն իրականացնում է իր հաճախորդների բանկային սպասարկումը.
- 2.1.9. Գործառնական օր՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկում:

Հոդված 3. Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը

3.1. Սույն համաձայնագրով նախատեսված գործառնություններն իրականացվում են բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

3.2. Կողմերի միջև դրամական միջոցներով գործառնությունները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Կողմերի համապատասխան դրամային հաշիվներով:

3.3. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.

3.3.1. Բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով Հայտի ներկայացումը և Կենտրոնական բանկի կողմից Հայտի մերժումը իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:

3.3.2. Գործարքների կնքումը իրականացվում է Կենտրոնական բանկ ներկայացված համապատասխան Հայտի(երի) հիման վրա: Հայտում նշված գումարը փոխանցվում է Միջանկյալ հաշվին: Հայտը(երը) ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով Հայտերը ներկայացվում են «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 100 հաղորդագրության միջոցով: Եթե Բանկը տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, Կողմի հսկողության ներքո գործող տեխնիկաձրագրային ապահովման անսարքություն և այլն) Հայտը ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և Հայտը ներկայացվում է թղթային եղանակով: Թղթային եղանակի կիրառման դեպքում Բանկը Հայտը ներկայացնում է Կենտրոնական բանկին երկու օրինակից էլեկտրոնային եղանակով սահմանված վերջնաժամկետից 15 (տասնհինգ) րոպե առաջ, որից մեկը մնում է Կենտրոնական բանկի մոտ, իսկ մյուսը վերադարձվում է Բանկին՝ ստացման ժամանակի վերաբերյալ նշումով՝ վավերացված ստացողի ստորագրությամբ: Կենտրոնական բանկ Հայտի ներկայացման պահ է համարվում՝
ա) թղթային եղանակով ներկայացված Հայտի դեպքում՝ Կենտրոնական բանկի լիազորված աշխատակցին Հայտի հանձնման պահը,
բ) էլեկտրոնային եղանակով ներկայացված Հայտի դեպքում՝ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը:

3.3.3. Կենտրոնական բանկը Գործարք կնքում է այն Հայտի կամ Հայտերի հիման վրա, որը մերժման ենթակա չէ:

3.3.4. Կենտրոնական բանկը Հայտը մերժում է միայն այն դեպքում, երբ Հանձնարարականը լրացված և ուղղարկված չէ սույն համաձայնագրով սահմանված կարգով:

3.3.5. Եթե Բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամանակահատվածում չի ստանում Հայտի մերժում (ՀՏ 952), ապա Գործարքը համարվում է կնքված:

3.4 Սույն համաձայնագրի 3.3. կետի համաձայն կնքված Գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

3.4.1. Կենտրոնական բանկը Գործարքի կնքման ամսաթվին անվիճելի (անակցեպտո) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, կատարում է կնքված Գործարքին համապատասխան դրամական միջոցների մուտքագրում Միջանկյալ հաշվից Բանկի Հատուկ հաշվին.

3.4.2. Կենտրոնական բանկը Գործարքի մարման ամսաթվին Գործարքին համապատասխան դրամական միջոցները մուտքագրում է Բանկի թղթակցային հաշվին.

3.4.3. Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կնքման ամսաթվին հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման ամսաթիվը ներառյալ, ընդ որում՝ տոկոսագումար վճարվում է Գործարքի մարման ամսաթվին.

3.4.4. Կենտրոնական բանկը Գործարքով ամրագրված գործառնությունները իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:

3.4.5. Կենտրոնական բանկը Բանկից դրամական միջոցներ է ներգրավում մեկ օր ժամկետով:

3.5. Կենտրոնական բանկը կարող է կատարել դրամական պարտավորությունների հաշվանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 426-րդ և 921-րդ հոդվածներով սահմանված կարգով և դեպքերում:

Հոդված 4. Կողմերի պարասխանադրությունը

4.1. Գործարքի մարման ամսաթվին Կենտրոնական բանկի կողմից ներգրավված գումարը և հաշվեգրված տոկոսագումարը Բանկի թղթակցային հաշվին չմուտքագրելու դեպքում Կենտրոնական բանկը հաջորդ Բանկային օրվա մինչև ժամը 11:00-ն Բանկի թղթակցային հաշվին մուտքագրում է ներգրավված գումարը և հաշվեգրված տոկոսագումարը, ինչպես նաև վճարում է տուժանք ներգրավված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

4.2. Կողմերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց տրամադրելու համար:

Հոդված 5. Վեճերի լուծման կարգը

5.1 Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսուներորդ ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Բանկային օրվա ընթացքում:

5.2 Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում դրանք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 6. Համաձայնագրի գործողության ժամկետը

6.1. Սույն համաձայնագիրը կնքված է անժամկետ և ուժի մեջ է մտնում կնքման պահից:

6.2. Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը գրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքները կնքելու իրավունքից:

6.3. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 7.2. կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

6.4. Սույն համաձայնագրի գործողությունը կարող է նաև դադարեցվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ, այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին գրավոր տեղեկացնելուց մեկ ամիս հետո, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

6.5. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է Գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի Կողմերին տեղեկացնել իր հասցեի, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի, իրավասու էլեկտրոնային հասցեների, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում տեղեկացումը ստանալուց հետո երկրորդ Բանկային օրը:

Հոդված 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

7.1. Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի ազդեցության:

7.2. Հոդված 7-ի 7.1 կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն համաձայնագրի դրույթները խախտող Կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 8. Այլ դրույթներ

8.1. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 (երկու) օրինակից (յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ): Երկու օրինակն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրին կցվող հավելվածները կազմում են նրա բաղկացուցիչ մասը:

8.2. Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված և կնքված են Կողմերի կողմից:

8.3. Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից Կողմերի միջև կնքված « ___ »

_____ 20__ թ N _____ համաձայնագրի գործողությունը

դադարեցվում է:

8.4. Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելու օրվանից՝ առանց սույն համաձայնագրի Հոդված 8-ի 8.2. կետում նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

Հոդված 9. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ	Բանկի անվանում
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ.Սարգսյանի փ., 6	Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, _____ փ.,
Հեռախոս՝	Հեռախոս՝
Ֆաքս՝	Ֆաքս՝
	Թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում՝
	Միջանկյալ հաշիվ Կենտրոնական բանկում՝
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝ _____
« _____ » 2011 թ.	« _____ » 2011 թ.